

Իսկ Յոյներն է դարէն աւելցուցին պան-
րակերութեան շաբաթ մը (անդ, 2144),
որ թէ իրենցմէ եւ թէ մեր մատենագրե-
րէն պահրոշտի կոչուած է: Այս հաշուով՝
աւագ շաբաթն աղուհացից մասն եղած է
միշտ՝ թէ օտարաց եւ թէ մեր քով:

Այս խնդիրը մեր քով կնճոտութեանց
պատճառ դարձաւ այլ եւ այլ դարերու
մէջ: Ի սկզբան Հայերն ալ բոլոր միւս
արեւելեայց հետ կը լուծէին մեծ պահոց
շաբաթ ու կիւրակէները: Այս է Ս. Սա-
հակայ կանոնաց յիշատակած «զհաց
ապաշխարողացն՝ զորս յաւուրս քառաս-
նորդացն առնեն հանգիստ՝ շաբարու կամ
կիւրակի» (113): Նոյնը կը հաստատէ
Մանդակունին ալ, ըսելով՝ թէ կան ու-
մանք, որ «զկէս ինչ ի շաբաթուցն»
կարեւոր կը կոչեն ու պնդութեամբ կը
պահեն, եւ միւսներն «սպաղսս¹ անուա-
նեն» ու պահքը կը թուլացնեն, ճաշա-
կելով «ի փափուկ կերակրոց», որուն
սակայն ինք կը հակառակի (35), պա-
տուիրելով նոյն աւուրց պահպանութիւնը
նաեւ երկրայականի մը մէջ (209). մինչ

կրքով մը կը թշնամանէ Փրանկներն իբր «որովայնա-
մու», ըստ որում պահքը երկուշաբթիէն չէին սկսեր
(Քրդ. ձմր. 149):

1. Յուն. ἀπαλός, — լձճ, որ է փափուկ: